17688

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ (ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՎՏՈՆՈՄ ՄԱՐԶԻ), ՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՎ ԱՎԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

324 ն
4-21

ԱԶԵՐՆԵՇՐ

Քաղաքական գրականության բաժին

ԲԱԳՈՒ—1939

20 JUL 2010
2 6 SEP 2006
324
4-21

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ (ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՎՏՈՆՈՄ ՄԱՐԶԻ), ՇՐՋԱՆԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՎ ԱՎԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱԶԵՐՆԵՇՐ
Թարգմանական գրականության բաժին

ԲԱԳՈՒ—1939

JUL 09 .01.2013 17688

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԿՐՈՐԴ ՍԵՍԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ 1939 Թ. ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ

Гос. Публ. Библиотека ССР им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
3623
39

# ԳԼՈՒԽ I

## ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 1.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 141-րդ հոդվածի հիման վրա աշխատավորների դեպուտատների մարզային (Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի), շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Խորհուրդների դեպուտատների ընտրությունների ընտրողները կատարում են ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

ՀՈԴՎԱԾ 2.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 142-րդ հոդվածի հիման վրա դեպուտատների ընտրությունները ընդհանուր են. Ադրբեջանական ԽՍՀ բոլոր քաղաքացիները, վորոնք հասել են 18 տարեկանի, անկախ ռասայական և ազգային պատկանելիությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու դեպուտատների ընտրություններին և ընտրվելու աշխատավորների դեպուտատների Խորհուրդներում, բացի խելագարներից և այն անձերից, վորոնք դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքների զրկումով:

ՀՈԴՎԱԾ 3.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 143-րդ հոդվածի հիման վրա դեպուտատների ընտրությունները հավասար են. յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն. բոլոր քաղաքացիները ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:

ՀՈԴՎԱԾ 4.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 144-րդ հոդվածի հիման վրա կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են տղամարդկանց հետ հավասարապես:

ՀՈԴՎԱԾ 5.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 145-րդ հոդվածի հիման վրա Կարմիր Բանակի շարքերում գտնվող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են բոլոր քաղաքացիների հետ հավասարապես:

ՀՈԴՎԱԾ 6.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 146-րդ հոդվածի հիման վրա դեպուտատների ընտրություններն ուղղակի յեն. աշխատավորների դեպուտատների մարզային (Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի), շրջանային, քաղաքային, գյուղական յեվ ավանային Խորհուրդների ընտրություններն ընտրողները կատարում են անմիջականորեն՝ ուղղակի ընտրությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 7.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 147-րդ հոդվածի հիման վրա Ադրբեջանական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների Խորհուրդների դեպուտատների ընտրությունների ժամանակ քվեարկությունը գաղտնի յե:

*ՀՈԴՎԱԾ* 8.—*Ադրբեջանական ՍՍՀ Սահմանադրության 148-րդ հոդվածի հիման վրա Ադրբեջանական ՍՍՀ աշխատավորների դեպուտատների Սովետների ընտրությունները կատարվում են ըստ ընտրական օկրուգների:*

*Յուրաքանչյուր ընտրական օկրուգ աշխատավորների դեպուտատների համապատասխան Սովետն է ուղարկում մեկ դեպուտատ:*

*ՀՈԴՎԱԾ* 9.—*Ադրբեջանական ՍՍՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի հիման վրա մյուս միութենական հանրապետությունների քաղաքացիներն Ադրբեջանական ՍՍՀ տերիտորիայում ընտրական իրավունքներից օգտվում են Ադրբեջանական ՍՍՀ քաղաքացիների հետ հավասարապես:*

*ՀՈԴՎԱԾ* 10.—*Նախիջևանի ավտոնոմ հանրապետությունում աշխատավորների դեպուտատների Սովետների ընտրությունների կատարման կարգը սահմանվում է «Նախիջևանի ԱՍՍՀ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Սովետների ընտրությունների կանոնադրությամբ»:*

*ՀՈԴՎԱԾ* 11.—*Ադրբեջանական ՍՍՀ աշխատավորների դեպուտատների Սովետների ընտրությունների կատարման հետ կապված ծախսերն արվում են պետության հաշվին:*

## ԳԼՈՒԽ II
## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

*ՀՈԴՎԱԾ* 12.—*Ընտրողների ցուցակները կազմվում են՝ քաղաքներում — աշխատավորների դեպուտատների քաղաքային Սովետի կողմից, իսկ ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ ռայոնական Սովետի կողմից. ավաններում՝ ավանային Սովետի կողմից. գյուղական վայրերում՝ աշխատավորների դեպուտատների գյուղական Սովետի կողմից:*

*Ընտրողների ցուցակների ձևը սահմանում է Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն Սովետի Նախագահությունը:*

*ՀՈԴՎԱԾ* 13.—*Ընտրողների ցուցակների մեջ մտցվում են՝ ընտրությունների օրը 18 տարին լրացրած բոլոր քաղաքացիները, որոնք ունեն ընտրական իրավունք և ցուցակները կազմելու մոմենտին բնակվում են (մշտապես կամ ժամանակավորապես) տվյալ Սովետի տերիտորիայում:*

*ՀՈԴՎԱԾ* 14.—*Ընտրողների ցուցակների մեջ չեն մտցվում այն անձերը, որոնք դատական վճիռներով ընտրական իրավունքներից զրկված են ընտրական իրավունքներից զրկելու վերաբերյալ դատավճռի մեջ սահմանված ամբողջ ժամանակամիջոցում, ինչպես և այն անձերը, որոնք օրենքով սահմանված կարգով ճանաչված են խելագար:*



*ՀՈԴՎԱԾ* 15.—*Ընտրողներից ոչ ոք չի կարող մտցվել մեկից ավելի ընտրական ցուցակի մեջ:*

*ՀՈԴՎԱԾ* 16.—*Ընտրողների ցուցակները, որոնք ընդհանուր են աշխատավորների դեպուտատների բոլոր Սովետների ընտրությունների համար, կազմվում են ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի, այբուբենական կարգով, մատնանշելով ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, բնակության վայրը, ինչպես և աշխատավորների դեպուտատների համապատասխան Սովետի ընտրությունների ընտրական օկրուգների համարները: Ընտրողների ցուցակներն ստորագրվում են աշխատավորների դեպուտատների Սովետի նախագահի ու քարտուղարի կողմից:*

*ՀՈԴՎԱԾ* 17.—*Զինվորական մասերում և զորային միավորումներում գտնվող ընտրողների ցուցակները կազմվում են հրամանատարության կողմից՝ հրամանատարի և զինվորական կոմիսարի ստորագրություններով: Մյուս բոլոր զինվորական ծառայողներն ընտրողների ցուցակների մեջ են մտցվում ըստ բնակության վայրի՝ աշխատավորների դեպուտատների համապատասխան Սովետների կողմից:*

*ՀՈԴՎԱԾ* 18.—*Հիվանդանոցներին, ծննդատներին, սանատորիաներին և բուժական մյուս հիմնարկություններին կից ստեղծվող ընտրական տեղամասերի ընտրողների ցուցակները կազմվում են ինչպես հիվանդ քաղաքացիների համար, այնպես և ընտրությունների օրը հերթապահության մեջ գտնվող բժշկական անձնակազմի համար:*

*Ընտրություններին մասնակցել չեն կարող սկառլատինային և դիֆտերիային բաժանմունքներում գտնվող հիվանդները:*

*ՀՈԴՎԱԾ* 19.—*Ընտրություններից 35 օր առաջ աշխատավորների դեպուտատների Սովետն ընտրողների ցուցակները կախում է ընդհանուրի գիտության համար, կամ ընտրողների համար հնարավորություն է ապահովում այդ ցուցակներին ծանոթանալու Սովետի շենքում:*

*ՀՈԴՎԱԾ* 20.—*Ընտրողների ցուցակների բնագիրը պահվում է համապատասխանորեն աշխատավորների դեպուտատների Սովետում և զինվորական մասում կամ զորային միավորման մեջ:*

*ՀՈԴՎԱԾ* 21.—*Այն դեպքում, երբ ընտրողն ընտրողների ցուցակի հրապարակման և ընտրությունների օրվա միջև ընկած ժամանակամիջոցում փոխում է իր բնակության վայրը, աշխատավորների դեպուտատների համապատասխան Սովետը նրան տալիս է Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն Սովետի Նախագահության կողմից սահմանված ձևի «քվեարկության իրավունքի վկայական» և ընտրողների ցուցակի մեջ նշում է — «մեկնեց». նոր բնակավայրում—մշտական կամ ժամանակավոր — ընտրողը մտցվում է ընտրողների ցուցակի*

մեջ, ներկայացնելով անձնական վկայական, ինչպես նաև «քվեարկության իրավունքի վկայական»:

ՀՈԴՎԱԾ 22.—Ընտրողների ցուցակի մեջ անճշտություն լինելու վերաբերյալ (ցուցակի մեջ չմտցնելը, ցուցակից հանելը, ազգանվան, անվան, հայրանվան աղավաղումը, ընտրական իրավունքներից զրկված անձերին սխալ կերպով ցուցակի մեջ մտցնելը) հայտարարությունը տրվում է աշխատավորների դեպուտատների այն Խորհրդին, վորը հրապարակել է ցուցակը:

ՀՈԴՎԱԾ 23.—Աշխատավորների դեպուտատների Խորհրդի գործադիր կոմիտեն պարտավոր է յերեք որվա ընթացքում քննության առնել ընտրողների ցուցակի մեջ յեղած անճշտության վերաբերյալ տրված յուրաքանչյուր հայտարարությունը:

ՀՈԴՎԱԾ 24.—Ընտրողների ցուցակի մեջ յեղած անճշտության վերաբերյալ հայտարարությունը քննելուց հետո, աշխատավորների դեպուտատների Խորհրդի գործադիր կոմիտեն պարտավոր է կամ անհրաժեշտ ուղղումներ մտցնել ընտրողների ցուցակների մեջ, կամ հայտարարություն տվողին գրավոր տեղեկանք տալ նրա հայտարարությունը մերժելու մոտիվների մասին. աշխատավորների դեպուտատների Խորհրդի վորոշման հետ համաձայն չլինելու դեպքում հայտարարություն տվողը կարող է բողոք ներկայացնել ժողովրդական դատարանին:

ՀՈԴՎԱԾ 25.— Ժողովրդական դատարանը պարտավոր է յերեք որվա ընթացքում դատական դռնբաց նիստում՝ կանչելով հայտարարություն տվողին և Խորհրդի ներկայացուցչին, քննության առնել ցուցակի մեջ յեղած անճշտության վերաբերյալ բողոքը և իր վճիռն անհապաղ հայտնել ինչպես հայտարարություն տվողին, այնպես ել Խորհրդին: Ժողովրդական դատարանի վճիռը վերջնական է:

## ԳԼՈՒԽ III

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՎՏՈՆՈՄ ՄԱՐԶԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐԸ ՅԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 26.—Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգները կազմվում են աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի կողմից:

Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 148-րդ հոդվածի հիման վրա Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգները կազմվում են՝ մի ոկրուգին 2500 բնակչի նորմայով:



ՀՈԴՎԱԾ 27.—Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգների ցուցակները հրապարակվում են աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի գործադիր կոմիտեյի կողմից, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ:

ՀՈԴՎԱԾ 28.—Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում ստեղծվում է աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների Մարզային ընտրական հանձնաժողով:

ՀՈԴՎԱԾ 29.—Մարզային ընտրական հանձնաժողովը կազմվում է աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում է Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից՝ բաղկացած նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 8–10 անդամից, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ:

ՀՈԴՎԱԾ 30. — Մարզային ընտրական հանձնաժողովը՝

ա) ավտոնոմ մարզի ամբողջ տերիտորիայում աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների ընթացքում հսկում է ընտրությունների վերաբերյալ սույն Կանոնադրության անշեղ կատարմանը.

բ) քննության է առնում ընտրական հանձնաժողովների սխալ գործողությունների վերաբերյալ բողոքները և բողոքների առթիվ ընդունում է վերջնական վորոշումներ.

գ) պատրաստում է աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների ընտրական բյուլետեններ՝ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձևով.

դ) գրանցում է աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրված դեպուտատներին.

ե) աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի մանդատային հանձնաժողովին է հանձնում ընտրությունների գործավարությունը:

ՀՈԴՎԱԾ 31.—Աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական ոկրուգում ստեղծվում է Ոկրուգային ընտրական հանձնաժողով:

ՀՈԴՎԱԾ 32.—Աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի գործադիր կոմիտեյի կողմից՝ բաղկացած նախագահից, նախագահի տեղակալից,

քարտուղարից և 4–6 անդամից, վոչ ուշ, քան ընտրություններից 50 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 33.—Աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների Օկրուգային ընտրական հանձնաժողովը՝

ա) սահմանում է ընտրական տեղամասերի համարներն ըստ կարգի.

բ) գրանցում է աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի դեպուտատության թեկնածուներին, վորոնք առաջադրված են Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության և ընտրությունների սույն Կանոնադրության պահանջների պահպանումով.

գ) Տեղամասային ընտրական հանձնաժողովներին մատակարարում է սահմանված ձևի ընտրական բյուլետեններ.

դ) սահմանում է ընտրությունների արդյունքներն օկրուգում.

ե) ընտրված դեպուտատին վկայական է տալիս ընտրվելու մասին.

զ) Մարզային ընտրական հանձնաժողովին է հանձնում ընտրությունների գործավարությունը։

## ԳԼՈՒԽ IV

## ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՕԿՐՈՒԳՆԵՐԸ ՅԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 34. — Աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների ընտրությունների ընտրական օկրուգները կազմվում են աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների կողմից։

Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 148–րդ հոդվածի հիման վրա ընտրական օկրուգները կազմվում են հետևյալ նորմաներով՝

ավելի քան 25 հազար բնակիչ ունեցող շրջանում յուրաքանչյուր հազար բնակչին մեկ ընտրական օկրուգ, սակայն վոչ ավելի քան 60 օկրուգ.

մինչև 25 հազար բնակիչ ունեցող շրջանում կազմվում է 25 ընտրական օկրուգ։

ՀՈԴՎԱԾ 35.—Աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների ընտրությունների ընտրական օկրուգների ցուցակները հրապարակվում են աշխատավորների դեպուտատների Խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեների կողմից, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 36.—Յուրաքանչյուր շրջանում ստեղծվում է աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի ընտրությունների Շրջանային ընտրական հանձնաժողով։



ՀՈԴՎԱԾ 37.—Շրջանային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից, իսկ Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի տերիտորիայում՝ աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի կողմից՝ բաղկացած նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 4–6 անդամից, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 38.—Շրջանային ընտրական հանձնաժողովը՝

ա) շրջանի տերիտորիայում, շրջանային Խորհրդի ընտրությունների ընթացքում, հսկում է ընտրությունների սույն Կանոնադրության անշեղ կատարմանը.

բ) քննության է առնում աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի ընտրությունների ընտրական հանձնաժողովների սխալ գործողությունների վերաբերյալ բողոքները։

գ) հսկում է ընտրողների ցուցակները ժամանակին կազմելուն և ընդհանուրի գիտությանը հասցնելուն.

դ) հսկում է աշխատավորների դեպուտատների Խորհուրդների համապատասխան գործադիր կոմիտեների կողմից ընտրական տեղամասերը ժամանակին կազմակերպելուն, իսկ հանրապետական ստորադրման շրջանների տերիտորիայում սահմանում է ընտրական տեղամասերի համարներն ըստ կարգի.

ե) պատրաստում է աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի ընտրությունների ընտրական բյուլետեններն Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձևով.

զ) գրանցում է աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդում ընտրված դեպուտատներին.

է) աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի մանդատային հանձնաժողովին է հանձնում ընտրությունների գործավարությունը։

ՀՈԴՎԱԾ 39.—Աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական օկրուգում ստեղծվում է Օկրուգային ընտրական հանձնաժողով։

ՀՈԴՎԱԾ 40.—Աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների ընտրությունների օկրուգային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի գործադիր կոմիտեյի կողմից՝ բաղկացած նախագահից, նախագահի տե–

ղակալից, քարտուղարից և 2–4 անդամից, վոչ ուշ, քան ընտրություններից 50 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 41. — Աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը՝

ա) գրանցում է աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի դեպուտատության թեկնածուներին, վորոնք առաջադրված են Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության և ընտրությունների վերաբերյալ սույն Կանոնադրության պահանջների պահպանումով.

բ) Տեղամասային ընտրական հանձնաժողովներին մատակարարում է սահմանված ձևի ընտրական բյուլետեններ.

գ) սահմանում է ընտրությունների արդյունքներն ըստ ոկրուգի.

դ) ընտրված դեպուտատին վկայական է տալիս ընտրվելու մասին.

ե) Շրջանային ընտրական հանձնաժողովին է հանձնում ընտրությունների գործավարությունը։

## ԳԼՈՒԽ V

### ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐԸ ՅԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 42.—Աշխատավորների դեպուտատների քաղաքային և քաղաքներում ռայոնական Խորհուրդների ընտրությունների ընտրական ոկրուգները կազմվում են համապատասխանաբար աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում ռայոնական Խորհրդի կողմից։

Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 148-րդ հոդվածի հիման վրա ընտրական ոկրուգները կազմվում են հետևյալ նորմաներով՝

12 հազարից մինչև 100 հազար բնակիչ ունեցող քաղաքներում—յուրաքանչյուր 350 բնակչին մեկ ընտրական ոկրուգ.

մինչև 12 հազար բնակիչ ունեցող քաղաքներում կազմվում են 35 ընտրական ոկրուգ.

Կիրովաբադ քաղաքում—յուրաքանչյուր 400 բնակչին մեկ ընտրական ոկրուգ.

Բաքու քաղաքում—յուրաքանչյուր 1000 բնակչին մեկ ընտրական ոկրուգ։

Ավելի քան 20 հազար բնակիչ ունեցող քաղաքային ռայոններում կազմվում է յուրաքանչյուր 500 բնակչին մեկ ոկրուգ, սակայն վոչ



ավելի, քան 250 ընտրական ոկրուգ. մինչև 20 հազար բնակիչ ունեցող քաղաքային ռայոններում կազմվում են 35 ընտրական ոկրուգ։

ՀՈԴՎԱԾ 43.—Աշխատավորների դեպուտատների քաղաքային յեվ քաղաքներում ռայոնական Խորհուրդների ընտրությունների ընտրական ոկրուգների ցուցակները հրապարակվում են աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում ռայոնական Խորհրդի գործադիր կոմիտեյի կողմից, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 44. — Յուրաքանչյուր քաղաքում և քաղաքների ռայոնում ստեղծվում է աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում ռայոնական Խորհրդի ընտրությունների Քաղաքային, Ռայոնական ընտրական հանձնաժողով։

ՀՈԴՎԱԾ 45.—Քաղաքային և քաղաքներում Ռայոնական ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են՝ հանրապետական ստորադրման քաղաքներում Քաղաքային ընտրական հանձնաժողովը — Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից. Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի մարզային ստորադրման քաղաքներում — աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի կողմից. շրջանային ստորադրման քաղաքներում—աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհրդի կողմից. Ռայոնական ընտրական հանձնաժողովը քաղաքներում—աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհրդի կողմից՝ բաղկացած նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 6–10 անդամից, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 46. — Քաղաքային, քաղաքներում Ռայոնական ընտրական հանձնաժողովը՝

ա) քաղաքի և ռայոնի տերիտորիայում, քաղաքային, ռայոնական Խորհրդի ընտրությունների ընթացքում, հսկում է ընտրությունների սույն Կանոնադրության անշեղ կատարմանը։

բ) քննության է առնում աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում ռայոնական Խորհրդի ընտրությունների ընտրական հանձնաժողովների սխալ գործողությունների վերաբերյալ բողոքները.

գ) հսկում է ընտրողների ցուցակները ժամանակին կազմելուն և ընդհանուրի դիտությանը հասցնելուն.

դ) հսկում է աշխատավորների դեպուտատների Խորհուրդների համապատասխան գործադիր կոմիտեների կողմից ժամանակին ընտ-

րական տեղամասեր կազմակերպելուն, իսկ հանրապետական ստորադրման քաղաքներում սահմանում է ընտրական տեղամասերի համարներն ըստ կարգի.

ե) պատրաստում է աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում ռայոնական Խորհրդի ընտրությունների ընտրական բյուլետեններն Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձևով.

զ) գրանցում է աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքում ռայոնական Խորհրդի ընտրված դեպուտատներին.

է) աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում ռայոնական Խորհրդի մանդատային հանձնաժողովին է հանձնում ընտրությունների գործավարությունը:

ՀՈԴՎԱԾ 47. — Աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքում ռայոնական Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական օկրուգում ստեղծվում է Օկրուգային ընտրական հանձնաժողով:

ՀՈԴՎԱԾ 48. — Աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում ռայոնական Խորհուրդների ընտրությունների օկրուգային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքում ռայոնական Խորհրդի գործադիր կոմիտեյի կողմից՝ բաղկացած նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 2–4 անդամից, վոչ ուշ, քան ընտրություններից 50 որ առաջ:

ՀՈԴՎԱԾ 49. — Աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքում ռայոնական Խորհրդի ընտրությունների Օկրուգային ընտրական հանձնաժողովը՝

ա) գրանցում է աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքում ռայոնական Խորհրդի դեպուտատության թեկնածուներին, վորոնք առաջադրված են Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության և ընտրությունների սույն Կանոնադրության պահանջների պահպանումով.

բ) Տեղամասային ընտրական հանձնաժողովներին մատակարարում է սահմանված ձևի ընտրական բյուլետեններ.

գ) սահմանում է ընտրությունների արդյունքներն ըստ օկրուգի.

դ) ընտրված դեպուտատին վկայական է տալիս ընտրվելու մասին.



ե) Քաղաքային, քաղաքում Ռայոնական ընտրական հանձնաժողովին է հանձնում ընտրությունների գործավարությունը:

## ԳԼՈՒԽ VI

## ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՎ ԱՎԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՕԿՐՈՒԳՆԵՐԸ ՅԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 50. — Աշխատավորների դեպուտատների գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունների ընտրական օկրուգները կազմվում են աշխատավորների դեպուտատների գյուղական և ավանային Խորհրդի կողմից:

Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 148–րդ հոդվածի հիման վրա ընտրական օկրուգները կազմվում են հետևյալ նորմաներով՝

ավելի քան 1000 բնակիչ ունեցող գյուղական Խորհուրդների յեվ ավանների տերիտորիայում—յուրաքանչյուր 100 բնակչին մեկ ընտրական օկրուգ, սակայն վոչ ավելի, քան 25 օկրուգ. մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղխորհուրդներում և ավաններում կազմվում են 9 ընտրական օկրուգ:

ՀՈԴՎԱԾ 51.—Աշխատավորների դեպուտատների գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունների ընտրական օկրուգների ցուցակները հրապարակվում են աշխատավորների դեպուտատների գյուղական և ավանային Խորհուրդների գործադիր կոմիտեների կողմից, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ:

ՀՈԴՎԱԾ 52.—Յուրաքանչյուր գյուղխորհրդում և ավանում ստեղծվում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների Գյուղական, Ավանային ընտրական հանձնաժողով:

ՀՈԴՎԱԾ 53.—Գյուղական և Ավանային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների կողմից՝ բաղկացած նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 2–4 անդամից, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ:

ՀՈԴՎԱԾ 54.—Գյուղական, Ավանային ընտրական հանձնաժողովը՝

ա) գյուղխորհրդի և ավանի տերիտորիայում, գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների ընթացքում հսկում է ընտրությունների սույն Կանոնադրության անշեղ կատարմանը.

բ) քննություն է անում աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների ընտրական հանձնաժողովների սխալ գործողությունների վերաբերյալ բողոքները.

գ) պատրաստում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների ընտրական բյուլետենները՝ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձևով և Տեղամասային ընտրական հանձնաժողովներին մատակարարում է ընտրական բյուլետեններ.

դ) գրանցում է ընտրված դեպուտատներին.

ե) աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի մանդատային հանձնաժողովին է հանձնում ընտրությունների գործավարությունը:

ՀՈԴՎԱԾ 55.—Աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական օկրուգում ստեղծվում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների Օկրուգային ընտրական հանձնաժողով:

ՀՈԴՎԱԾ 56.—Աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհուրդների ընտրությունների Օկրուգային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի կողմից՝ բաղկացած նախագահից, քարտուղարից և հանձնաժողովի մեկ անդամից, ոչ ուշ, քան ընտրություններից 50 օր առաջ:

ՀՈԴՎԱԾ 57. — Աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի ընտրությունների օկրուգային ընտրական հանձնաժողովը՝

ա) գրանցում է աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային Խորհրդի դեպուտատության թեկնածուներին, որոնք առաջադրված են Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության և ընտրությունների սույն Կանոնադրության պահանջների պահպանումով.

բ) սահմանում է ընտրությունների արդյունքներն ըստ օկրուգի.

գ) ընտրված դեպուտատին վկայական է տալիս ընտրվելու մասին.

դ) Գյուղական, Ավանային ընտրական հանձնաժողովին է հանձնում ընտրությունների գործավարությունը:



## ԳԼՈՒԽ VII

## ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԸ ՅԵՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 58.—Ընտրական բյուլետեններն ընդունելու և ձայները հաշվելու համար քաղաքների, ավանների և գյուղխորհուրդների տերիտորիան բաժանվում է ընտրական տեղամասերի, որոնք ընդհանուր են աշխատավորների դեպուտատների մարզային (Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի), շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունների համար:

ՀՈԴՎԱԾ 59.—Ընտրական տեղամասեր կազմելը քաղաքներում կատարում են աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհուրդները, ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում—աշխատավորների դեպուտատների ռայոնական Խորհուրդները, գյուղական վայրերում—աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդները:

ՀՈԴՎԱԾ 60.—Ընտրական տեղամասեր կազմելը կատարվում է ոչ ուշ, քան ընտրություններից 50 օր առաջ:

ՀՈԴՎԱԾ 61.—Ոչ ավելի, քան 2000 բնակիչ ունեցող գյուղխորհրդի տերիտորիան, որպես կանոն, կազմում է մեկ ընտրական տեղամաս. 500, բայց ոչ ավելի քան 2000 բնակիչ ունեցող յուրաքանչյուր գյուղական բնակավայրում կազմակերպվում է առանձին ընտրական տեղամաս:

Ավելի քան 2000 բնակիչ ունեցող գյուղխորհրդի և գյուղական բնակավայրի տերիտորիան բաժանվում է ընտրական տեղամասերի հետևյալ հաշվով՝ 1500–2500 բնակչին՝ մեկ ընտրական տեղամաս:

500-ից պակաս, բայց 300-ից ոչ պակաս բնակիչ ունեցող գյուղերում կամ գյուղերի խմբում, այն դեպքերում, երբ այդպիսի գյուղերի հեռավորությունն ընտրական տեղամասի կենտրոնից 10 կիլոմետրից անցնում է, կարող են կազմվել առանձին ընտրական տեղամասեր:

Առանձին շրջաններում, որտեղ գերակշռում են մանր բնակավայրերը, ինչպես և լեռնային ու քոչվորական շրջաններում, ընտրական տեղամասեր կարող են կազմվել 300-ից պակաս, սակայն 50-ից ոչ պակաս բնակչից:

ՀՈԴՎԱԾ 62.—Ավելի քան 2000 բնակիչ ունեցող քաղաքներն ու ավանները բաժանվում են ընտրական տեղամասերի՝ 1500—2500 բնակչին մեկ ընտրական տեղամասի հաշվով:

ՀՈԴՎԱԾ 63.—Զինվորական մասերը և զորային միավորումները կազմում են առանձին ընտրական տեղամասեր վոչ պակաս քան 50 և վոչ ավելի քան 1500 ընտրողի քանակությամբ:

ՀՈԴՎԱԾ 64.—Վոչ պակաս քան 50 ընտրող ունեցող հիվանդանոցներին, ծննդատներին, սանատորիաներին, հաշմանդամների տներին կից կազմվում են առանձին ընտրական տեղամասեր:

Մի քանի կորպուս ունեցող հիվանդանոցներում թույլ է տրվում առանձին կորպուսներին կից կազմել ընտրական տեղամասեր, յեթե դրանցից յուրաքանչյուրում կա վոչ պակաս քան 50 ընտրող:

Այն հիվանդանոցներում և մյուս բուժական հիմնարկություններում, վորտեղ առանձին ընտրական տեղամասեր չեն կազմակերպվում, թույլատրվում է հենց հիվանդանոցներում և բուժական հիմնարկություններում ընտրական բյուլետենները ընդունել ընտրական հանձնաժողովի առանձնացված անդամների միջոցով: Այդ դեպքերում հիվանդանոցներին մատակարարվում են առանձին քվեատուփեր:

ՀՈԴՎԱԾ 65.—Ընտրությունների որը յերթևեկության մեջ գտնվող նավերը վոչ պակաս քան 25 ընտրողի քանակությամբ, կարող են կազմել առանձին ընտրական տեղամասեր, վորոնք մտնում են նավի գրանցման վայրի ընտրական օկրուգի մեջ:

Այն դեպքերում, յերբ նավի վրա ընտրողների քանակությունը հավասար է աշխատավորների դեպուտատների քաղաքային կամ քաղաքներում ռայոնական Խորհրդի ընտրությունների ընտրական օկրուգի համար բնակչության նորմային, կազմվում է աշխատավորների դեպուտատների քաղաքային կամ ռայոնական Խորհրդի ընտրությունների առանձին ընտրական օկրուգ նավի գրանցման վայրում:

ՀՈԴՎԱԾ 66.—Յուրաքանչյուր ընտրական տեղամասում ստեղծվում է Տեղամասային ընտրական հանձնաժողով, վորն ընդհանուր է աշխատավորների դեպուտատների մարզային (Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի), շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունների համար:

ՀՈԴՎԱԾ 67.— Տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են քաղաքներում՝ աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհուրդների կողմից, իսկ ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ աշխատավորների դեպուտատների ռայոնական Խորհուրդների կողմից. գյուղական վայրերում՝ աշխատավորների դեպուտատների



շրջանային Խորհուրդների կողմից՝ բաղկացած նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 6—10 անդամից, վոչ ուշ, քան ընտրություններից 45 որ առաջ:

ՀՈԴՎԱԾ 68. — Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝

ա) ընտրական տեղամասում կատարում է ընտրական բյուլետենների ընդունումը.

բ) կատարում է աշխատավորների դեպուտատների մարզային, շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Խորհրդի դեպուտատության յուրաքանչյուր թեկնածուին տրված ձայների հաշվումը.

գ) քվեարկության արձանագրությունը հանձնում է համապատասխան Օկրուգային ընտրական հանձնաժողովին, իսկ ամբողջ գործավարությունը՝ աշխատավորների դեպուտատների քաղաքային կամ շրջանային Խորհրդին:

3623/31

## ԳԼՈՒԽ VIII

## ԴԵՊՈՒՏԱՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 69.—Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 149-րդ հոդվածի հիման վրա ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական օկրուգների:

Աշխատավորների դեպուտատների մարզային (Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի), շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Խորհուրդների թեկնածուներ առաջադրելու իրավունքն ապահովվում է աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների համար՝ կոմունիստական կուսակցական կազմակերպությունների, արհեստակցական միությունների, կոոպերատիվների, յերիտասարդության կազմակերպությունների, կուլտուրական ընկերությունների և ուրիշ կազմակերպությունների համար, վորոնք գրանցված են օրենքով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 70.—Թեկնածուներ առաջադրելու իրավունքը կենսագործում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ինչպես կենտրոնական օրգանները, այնպես և նրանց հանրապետական, մարզային ու շրջանային օրգանները, հավասարապես և բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները ձեռնարկություններում ու հիմնարկություններում, կարմիր-բանակայինների ընդհանուր ժողովները՝ զինվորական մասերում, նույնպես և գյուղացիների ընդհանուր ժողովները՝ կոլտնտեսություններում, խորհտնտեսությունների բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները՝ խորհտնտեսություններում:

Гос. Публ. Библиотека ССР им. А. Мясникяна

ՀՈԴՎԱԾ 71.—Դեպուտատության թեկնածուները չեն կարող լինել այն օկրուգի Օկրուգային, ինչպես և Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ, որտեղ նրանք առաջադրված են որպես դեպուտատության թեկնածուներ:

ՀՈԴՎԱԾ 72.—Ոչ ուշ, քան ընտրություններից 35 օր առաջ, աշխատավորների հասարակական բոլոր կազմակերպությունները կամ ընկերությունները, որոնք առաջադրում են աշխատավորների դեպուտատների մարզային (Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի) և շրջանային Խորհուրդների դեպուտատության թեկնածուներ, պարտավոր են դեպուտատության թեկնածուներին գրանցել համապատասխան Օկրուգային ընտրական հանձնաժողովում:

ՀՈԴՎԱԾ 73. — Ոչ ուշ, քան ընտրություններից 20 օր առաջ, աշխատավորների հասարակական բոլոր կազմակերպությունները կամ ընկերությունները, որոնք առաջադրում են աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհուրդների, քաղաքներում ռայոնական Խորհուրդների, գյուղական և ավանային Խորհուրդների դեպուտատության թեկնածուներ, պարտավոր են դեպուտատության թեկնածուներին գրանցել համապատասխան Օկրուգային ընտրական հանձնաժողովում:

ՀՈԴՎԱԾ 74.—Օկրուգային ընտրական հանձնաժողովները պարտավոր են գրանցել դեպուտատության բոլոր թեկնածուներին, որոնք առաջադրված են աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների կողմից՝ Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության և ընտրությունների սույն Կանոնադրության պահանջների պահպանումով:

ՀՈԴՎԱԾ 75.—Աշխատավորների այն հասարակական կազմակերպությունները կամ ընկերությունները, որոնք դեպուտատության թեկնածու յեն առաջադրում, պարտավոր են համապատասխան Օկրուգային ընտրական հանձնաժողովին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դեպուտատության թեկնածու առաջադրած ժողովի կամ նիստի արձանագրությունը, ստորագրված նախագահության անդամների կողմից, նշելով նրանց տարիքը, բնակության վայրը, թեկնածու առաջադրող կազմակերպության անունը, նշում դեպուտատության թեկնածու առաջադրող ժողովի կամ նիստի տեղը, ժամանակը և մասնակիցների քանակությունը, ըստ որում՝ արձանագրության մեջ պետք է նշված լինեն դեպուտատության թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, նրա տարիքը, բնակության վայրը, կուսակցականությունը, զբաղմունքը.



բ) դեպուտատության թեկնածուի հայտարարությունը տվյալ ընտրական օկրուգում նրան առաջադրող կազմակերպության անունից քվեարկվելու իր համաձայնության մասին:

ՀՈԴՎԱԾ 76.—Աշխատավորների դեպուտատների Խորհրդի դեպուտատության թեկնածուն միևնույն Խորհրդի համար կարող է քվեարկվել միայն մեկ օկրուգում:

ՀՈԴՎԱԾ 77.—Աշխատավորների դեպուտատների մարզային (Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի), շրջանային, քաղաքային, քաղաքներում ռայոնական, գյուղական և ավանային Խորհրդի ընտրությունների Օկրուգային ընտրական հանձնաժողովի հրաժարումը դեպուտատության թեկնածուին գրանցելուց՝ կարող է յերկու օրվա ընթացքում բողոքարկվել համապատասխանաբար Մարզային, Շրջանային, Քաղաքային, քաղաքներում Ռայոնական, Գյուղական և Ավանային ընտրական հանձնաժողովին, որի որոշումը վերջնական է:

ՀՈԴՎԱԾ 78.—Աշխատավորների դեպուտատների մարզային յեվ շրջանային Խորհուրդների դեպուտատության յուրաքանչյուր գրանցված թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, զբաղմունքը, կուսակցականությունը և թեկնածու առաջադրող հասարակական կազմակերպության անունը հրապարակվում են համապատասխան Օկրուգային ընտրական հանձնաժողովի կողմից, ոչ ուշ, քան ընտրություններից 30 օր առաջ:

Օկրուգային հանձնաժողովների կողմից աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքներում ռայոնական, գյուղական և ավանային Խորհուրդների դեպուտատության գրանցված թեկնածուներին վերաբերող տվյալները հրապարակվում են համապատասխան Քաղաքային, քաղաքներում Ռայոնական, Գյուղական և Ավանային ընտրական հանձնաժողովի կողմից, ոչ ուշ, քան ընտրություններից 15 օր առաջ:

ՀՈԴՎԱԾ 79.—Աշխատավորների դեպուտատների Խորհուրդների դեպուտատության գրանցված բոլոր թեկնածուները պարտադիր կերպով պետք է մտցվեն ընտրական բյուլետենների մեջ:

ՀՈԴՎԱԾ 80.—Աշխատավորների դեպուտատների մարզային (Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի), շրջանային, քաղաքային, քաղաքներում ռայոնական Խորհուրդների ընտրությունների Օկրուգային ընտրական հանձնաժողովները, նույնպես և Գյուղական ու Ավանային ընտրական հանձնաժողովները պարտավոր են ընտրական բյուլետեններն ուղարկել բոլոր Տեղամասային ընտրական հանձնաժողովներին, ոչ ուշ, քան ընտրություններից 10 օր առաջ:

ՀՈԴՎԱԾ 81·—Ընտրական բյուլետենները տպագրվում են համապատասխան ընտրական ոկրուգի բնակչության լեզուներով:

ՀՈԴՎԱԾ 82·—Ընտրական բյուլետենները տպագրվում են Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձևով և այնպիսի քանակությամբ, վոր ապահովվի ընտրական բյուլետենների մատակարարումը բոլոր ընտրողներին:

ՀՈԴՎԱԾ 83·—Յուրաքանչյուր կազմակերպության համար, վորն առաջադրել է համապատասխան ընտրական հանձնաժողովում գրանցված թեկնածու, հավասարապես և Ադրբեջանական ԽՍՀ յուրաքանչյուր քաղաքացու համար ապահովվում է անարգել ագիտացիա մղել այդ թեկնածուի ոգտին ժողովներում, մամուլում և այլ յեղանակներով, համաձայն Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության 132-րդ հոդվածի:

## ԳԼՈՒԽ IX

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԸ

ՀՈԴՎԱԾ 84·—Աշխատավորների դեպուտատների մարզային (Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի), շրջանային, քաղաքային, քաղաքներում ռայոնական, գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունները կատարվում են մեկ որվա ընթացքում, վոր ընդհանուր է Ադրբեջանական ԽՍՀ համար:

ՀՈԴՎԱԾ 85·—Ընտրությունների որը սահմանում է Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը, վոչ ուշ, քան ընտրությունների ժամկետից 2 ամիս առաջ: Ընտրությունները կատարվում են վոչ-աշխատանքային որը:

ՀՈԴՎԱԾ 86·—Ընտրություններից առաջ վերջին 15 որվա ընթացքում Տեղամասային ընտրական հանձնաժողովն ամեն որ լայնորեն հրապարակում է կամ վորևէ այլ միջոցով ընտրողներին ծանուցանում է ընտրությունների որվա և ընտրությունների տեղի մասին:

## ԳԼՈՒԽ X

## ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 87·—Ընտրողները ձայները տալիս են ընտրությունների որը, առավոտյան ժամը 6-ից մինչև գիշերվա ժամը 12-ը՝ տեղական ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 88·—Ընտրությունների որը, առավոտյան ժամը 6-ին, Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների ներկայությամբ ստուգում է քվեատուփերը և սահման-



ված ձևով կազմված ընտրողների ցուցակների առկայությունը, վորից հետո փակում ու կնքում է տուփերը հանձնաժողովի կնիքով և ընտրողներին հրավիրում է սկսել ձայներ տալը:

Կնիքների և քվեատուփերի ձևերը սահմանում է Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը:

ՀՈԴՎԱԾ 89·—Յուրաքանչյուր ընտրող քվեարկում է անձամբ, դրա համար ներկայանալով քվեարկության շենքը, ըստ վորում ընտրողները ձայները տալիս են ընտրական բյուլետենները քվեատուփերի մեջ գցելով:

ՀՈԴՎԱԾ 90· — Ընտրությունների շենքում բյուլետենները լրացնելու համար հատկացվում է առանձին սենյակ, վորտեղ քվեարկության ժամանակ բացի քվեարկողներից, արգելվում է վորևէ մեկի, այդ թվում և Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների, ներկայությունը· բյուլետենները լրացնելու համար մի քանի ընտրողներ միաժամանակ ներս թողնելիս սենյակը պետք է ունենա միջնորմներ կամ շիրմաներ՝ միաժամանակ ներս թողնվող ընտրողների թվի համեմատ:

ՀՈԴՎԱԾ 91·—Ընտրական շենքը ներկայացած ընտրողը Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին կամ անդամին ներկայացնում է կամ անձնագիրը, կամ կոլտնտեսային գրքույկը, կամ պրոֆմիութենական տոմսը, կամ անձի այլ վկայական և, ընտրողների ցուցակով ստուգվելուց ու ընտրողների ցուցակում նշվելուց հետո ստանում է սահմանված ձևի ընտրական բյուլետեններ:

ՀՈԴՎԱԾ 92·—Այն անձերի համար, վորոնք ընտրությունների շենքն են ներկայացել «քվեարկության իրավունքի վկայականով», համաձայն ընտրությունների սույն Կանոնադրության 21-րդ հոդվածի, Տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է հատուկ ցուցակ, վորը կցվում է ընտրողների ցուցակին:

ՀՈԴՎԱԾ 93· — Ընտրական բյուլետենները լրացնելու համար հատկացված սենյակում ընտրողը յուրաքանչյուր ընտրական բյուլետենում թողնում է այն թեկնածուի ազգանունը, վորին ձայն է տալիս ինքը, ջնջելով մյուսներինը· դրանից հետո ընտրողն անցնում է այն սենյակը, վորտեղ գտնվում է Տեղամասային ընտրական հանձնաժողովը, և՝ ընտրական բյուլետենները գցում է քվեատուփի մեջ:

ՀՈԴՎԱԾ 94·—Այն ընտրողները, վորոնք անգրագիտության կամ վորևէ ֆիզիկական թերության պատճառով հնարավորություն չունեն ինքնուրույն կերպով լրացնելու ընտրական բյուլետենները, իրավունք ունեն ընտրական բյուլետենները լրացնելու սենյակը հրավիրել վորևէ մի այլ ընտրողի՝ ընտրական բյուլետենները լրացնելու համար:

ՀՈԴՎԱԾ 95․— Ձայներ տալու ժամանակ ընտրական շենքում ընտրական ագիտացիա չի թույլատրվում։

ՀՈԴՎԱԾ 96․— Ընտրական շենքում կարգապահության համար պատասխանատվություն է կրում Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, և նրա կարգադրությունները բոլոր ներկա գտնվողների համար պարտադիր են։

ՀՈԴՎԱԾ 97․—Ընտրությունների օրվա գիշերը ժամը 12-ին Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայներ տալն ավարտված է հայտարարում, լեվ հանձնաժողովն սկսում է բանալ ծրարները։

## ԳԼՈՒԽ XI

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 98․— Այն շենքում, վորտեղ Տեղամասային ընտրական հանձնաժողովը ձայների հաշվում է կատարում, ձայները հաշվելիս իրավունք ունեն ներկա գտնվելու աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների դրա համար հատկապես լիազորված ներկայացուցիչները, նույնպես և մամուլի ներկայացուցիչները։

ՀՈԴՎԱԾ 99․—Տեղամասային ընտրական հանձնաժողովը, բաց անելով ծրարները, բյուլետենները հաշվում է ըստ օկրուգների, տրված բյուլետենների թիվը ստուգում է քվեարկությանը մասնակցած անձերի թվի հետ (բյուլետենները ստանալու ժամանակ ընտրողների ցուցակի մեջ արված նշումների հիման վրա), և ստուգման արդյունքները մտցնում է քվեարկության արձանագրության մեջ՝ ըստ յուրաքանչյուր ընտրական օկրուգի։

ՀՈԴՎԱԾ 100․—Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ հրապարակում է քվեարկության արդյունքներն ըստ յուրաքանչյուր բյուլետենի։

ՀՈԴՎԱԾ 101․—Անվավեր են համարվում այն բյուլետենները, վորոնց մեջ քվեարկության ժամանակ թողնված է ավելի քան մեկ թեկնածու, նույնպես և չսահմանված ձևի ու գույնի բյուլետենները։

ՀՈԴՎԱԾ 102․—Ընտրական բյուլետենի վավերական լինելու նկատմամբ կասկածներ ծագելու դեպքում հարցը լուծում է Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության միջոցով, վոր նշվում է արձանագրության մեջ։



ՀՈԴՎԱԾ 103․—Տեղամասային ընտրական հանձնաժողովն ըստ յուրաքանչյուր ընտրական օկրուգի, կազմում է Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձևի քվեարկության արձանագրություն յերկու օրինակից, վորը ստորագրում են Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, այդ թվում պարտադիր կերպով նախագահն ու քարտուղարը։

ՀՈԴՎԱԾ 104․—Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արձանագրության մեջ պետք է մատնանշված լինեն՝

ա) քվեարկությունն սկսվելու և վերջանալու ժամանակը․

բ) ընտրական տեղամասի և օկրուգների ընտրողների թիվը․

գ) ընտրողների ցուցակով ձայն տված ընտրողների թիվը․

դ) «քվեարկության իրավունքի վկայականներով» ձայն տված ընտրողների թիվը․

ե) ընտրական տեղամասում և օկրուգներում տրված բյուլետենների թիվը․

զ) Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրված հայտարարությունների ու բողոքների համառոտ շարադրումը, և Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները․

ը) ձայները հաշվելու արդյունքներն ըստ յուրաքանչյուր թեկնածուի։

ՀՈԴՎԱԾ 105․—Ձայների հաշվումն ավարտելուց և արձանագրությունները կազմելուց հետո, Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ հրապարակում է քվեարկության արդյունքներն ըստ յուրաքանչյուր օկրուգի։

ՀՈԴՎԱԾ 106․—Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմած քվերակության արձանագրության մեկ օրինակը 24 ժամվա ընթացքում սուրհանդակի միջոցով ուղարկվում է համապատասխան Օկրուգային ընտրական հանձնաժողովին։

ՀՈԴՎԱԾ 107․—Բոլոր ընտրական բյուլետենները (վավերականներն առանձին և անվավեր ճանաչվածներն առանձին) պետք է կնքվեն Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով և քվեարկության արձանագրությունների 2-րդ օրինակների և կնիքի հետ միասին Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից հանձնվեն պահելու՝ քաղաքներում—աշխատավորների դեպուտատների քաղաքային Խորհուրդներին, իսկ ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում—աշխատավորների դեպուտատների ռայոնական Խորհուրդներին, գյուղական վայրերում—աշխատավորների դեպուտատների ռայոնական Խորհուրդներին։

ՀՈԴՎԱԾ 108.—Աշխատավորների դեպուտատների Խորհուրդների վրա պարտականություն է դրվում պահելու ընտրական բյուլետենները, մինչև վոր յուրաքանչյուր օկրուգի դեպուտատների մանդատները հաստատվեն աշխատավորների դեպուտատների համապատասխան Խորհրդի կողմից։

ՀՈԴՎԱԾ 109.—Աշխատավորների դեպուտատների մարզային (Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի), շրջանային, քաղաքային, քաղաքներում ռայոնական, գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունների Օկրուգային ընտրական հանձնաժողովները օկրուգի ընտրությունների արդյունքները վորոշում են Տեղամասային ընտրական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա։

ՀՈԴՎԱԾ 110.—Այն շենքում, վորտեղ Օկրուգային ընտրական հանձնաժողովը ձայների հաշվումն է կատարում, ձայները հաշվելիս իրավունք ունեն ներկա գտնվելու աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների դրա համար հատկապես լիազորված ներկայացուցիչները, նույնպես և մամուլի ներկայացուցիչները։

ՀՈԴՎԱԾ 111.—Օկրուգային ընտրական հանձնաժողովը կազմում է Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության սահմանած ձևով քվերակության արձանագրություն 2 օրինակից, վորը ստորագրում են Օկրուգային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, այդ թվում պարտադիր կերպով նախագահը և քարտուղարը։

ՀՈԴՎԱԾ 112.—Օկրուգային ընտրական հանձնաժողովի արձանագրության մեջ պետք է նշված լինեն՝

ա) օկրուգի ընտրողների ընդհանուր թիվը.

բ) քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը.

գ) դեպուտատության յուրաքանչյուր թեկնածուին տրված ձայների թիվը.

դ) Օկրուգային ընտրական հանձնաժողովին տրված հայտարարությունների ու բողոքների համառոտ շարադրումը, և Օկրուգային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները։

ՀՈԴՎԱԾ 113.—Աշխատավորների դեպուտատների Խորհուրդների ընտրությունների ընտրական հանձնաժողովների նիստերը վավերական են համարվում, յեթե այնտեղ մասնակցում է հանձնաժողովների ընդհանուր կազմի կեսից ավելին։

ՀՈԴՎԱԾ 114.—Բոլոր հարցերն ընտրական հանձնաժողովներում վճռվում են ձայների հասարակ մեծամասնությամբ. ձայները հավասար լինելու դեպքում նախագահի ձայնը գերակշռություն է տալիս։



ՀՈԴՎԱԾ 115.—Ձայները հաշվելն ավարտելուց հետո 24 ժամից վոչ ուշ Օկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է արձանագրությունը կնքված ձևով սուրհանդակի միջոցով ուղարկել Մարզային (Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի), Շրջանային, Քաղաքային, Գյուղական և Ավանային ընտրական հանձնաժողովին։

ՀՈԴՎԱԾ 116.—Աշխատավորների դեպուտատների Խորհրդի դեպուտատության այն թեկնածուն, վորն ստացել է ձայների բացարձակ մեծամասնությունը, այսինքն օկրուգում տրված և վավերական ճանաչված բոլոր ձայների կեսից ավելին, համարվում է ընտրված։

ՀՈԴՎԱԾ 117.—Արձանագրությունն ստորագրելուց հետո Օկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահը հրապարակում է ընտրությունների արդյունքները և դեպուտատության ընտրված թեկնածուին վկայական է տալիս ընտրվելու մասին։ Ընտրվելու վերաբերյալ վկայականի ձևը սահմանում է Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը։

ՀՈԴՎԱԾ 118.—Յեթե օկրուգում թեկնածուներից վոչ մեկը ձայների բացարձակ մեծամասնություն չի ստացել, համապատասխան Օկրուգային ընտրական հանձնաժողովն այդ մասին արձանագրության մեջ նշում է առանձին և հայտնում է Մարզային (Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի), Շրջանային, Քաղաքային, քաղաքներում Ռայոնական, Գյուղական և Ավանային ընտրական հանձնաժողովին յեվ միաժամանակ հայտարարում է ավելի մեծ քանակությամբ ձայներ ստացած յերկու թեկնածուի վերաքվեարկություն, նույնպես և նշանակում է վերաքվեարկության օրը՝ վոչ ուշ, քան ընտրությունների առաջին շրջանն անցնելուց յերկու շաբաթ ժամկետում։

ՀՈԴՎԱԾ 119.—Յեթե օկրուգում տրված ձայների քանակությունը կազմում է այդ օկրուգում քվեարկելու իրավունք ունեցող ընտրողների կեսից պակասը, Օկրուգային ընտրական հանձնաժողովն այդ մասին արձանագրության մեջ նշում է առանձին և անհապաղ հաղորդում է համապատասխան Մարզային (Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի), Շրջանային, Քաղաքային, քաղաքներում Ռայոնական, Գյուղական և Ավանային ընտրական հանձնաժողովին, ըստ վորում այդ դեպքում Մարզային, Շրջանային, Քաղաքային, քաղաքներում—Ռայոնական, Գյուղական և Ավանային ընտրական հանձնաժողովը նշանակում է նոր ընտրություններ՝ վոչ ուշ, քան առաջին ընտրություններից հետո յերկու շաբաթ ժամկետում։

ՀՈԴՎԱԾ 120.—*Դեպուտատության թեկնածուների վերաքվեարկությունը, հավասարապես և անվավեր ճանաչվածների փոխարեն կատարվելիք նոր ընտրությունները տեղի յեն ունենում առաջին ընտրությունների համար կազմված ընտրողների ցուցակներով և լիովին համապատասխան ընտրությունների սույն կանոնադրության:*

## ԳԼՈՒԽ XII

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

ՀՈԴՎԱԾ 121.—*Ամեն վոք, ով բռնության, խաբեբայության, սպառնալիքների կամ կաշառքի միջոցով խոչընդոտ կհանդիսանա Ադրբեջանական ԽՍՀ քաղաքացուն՝ Ադրբեջանական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների Խորհուրդների մեջ ընտրելու և ընտրվելու նրա իրավունքի իրականացման գործում, — պատժվում է ազատազրկմամբ մինչև յերկու տարի ժամկետով:*

ՀՈԴՎԱԾ 122.—*Խորհրդի պաշտոնատար անձը կամ ընտրական հանձնաժողովի անդամը, վորոնք կեղծել են ընտրական փաստաթղթերը, կամ գիտավորյալ կերպով սխալ հաշվել ձայները,—պատժվում են ազատազրկմամբ մինչև յերեք տարի ժամկետով:*

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | | էջ |
|---|---|---|
| Գլուխ I | *Ընտրական սիստեմը* | 3 |
| Գլուխ II | *Ընտրողների ցուցակները* | 4 |
| Գլուխ III | *Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի աշխատավորների դեպուտատների մարզային Խորհրդի ընտրությունների ընտրական օկրուգները և ընտրական հանձնաժողովները* | 6 |
| Գլուխ IV | *Աշխատավորների դեպուտատների շրջանային Խորհուրդների ընտրությունների ընտրական օկրուգները և ընտրական հանձնաժողովները* | 8 |
| Գլուխ V | *Աշխատավորների դեպուտատների քաղաքային և քաղաքներում ռայոնական Խորհուրդների ընտրությունների ընտրական օկրուգները և ընտրական հանձնաժողովները* | 10 |
| Գլուխ VI | *Աշխատավորների դեպուտատների գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունների ընտրական օկրուգները և ընտրական հանձնաժողովները* | 13 |
| Գլուխ VII | *Ընտրական տեղամասերը և տեղամասային ընտրական հանձնաժողովները* | 15 |
| Գլուխ VIII | *Դեպուտատության թեկնածուներ առաջադրելու կարգը* | 17 |
| Գլուխ IX | *Ընտրությունների օրը* | 20 |
| Գլուխ X | *Քվեարկության կարգը* | 20 |
| Գլուխ XI | *Ընտրությունների արդյունքների վորոշումը* | 22 |
| Գլուխ XII | *Պատասխանատվություն քաղաքացիների ընտրական իրավունքների խախտման համար* | 26 |

Թողարկմանը պատասխանատու՝ Ա. ԲԱԲԼՈՒՄՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ռ. ՀՈՒՍԵՅՆՈՎ
Սրբագրիչ՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Сдано в производство 19/VII 1939 г.
Подписано к печати 26/VII 1939 г.
Печатных знаков 84000
Печатных листов 1³/₄.
Заказ № 2697.
Главлит № 4491
Формат 60×92¹/₁₆
Тираж 10,000.

Баку. Тип. „III Интернационал“ ул. Саратовца-Ефимова 29.

<< Ազգային գրադարան
NL0263198

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

580

AZƏRBAJÇAN SSR
OBLAST (DAƢLЬQ QARABAƢ
AVTONOM OBLASTЬ), RAJON,
ŞƏHƏR, KƏND VƏ POSJOLOQ
ZƏHMƏTKEŞ DEPUTATLARЬ
SOVETLƏRINƏ SECKILƏRƏ
DAIR ƏSASNAMƏ

Azərвajçan SSR Baş Soveti
Bakь—1939